

II. 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ
«2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ»

«2014 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրում» նախատեսված էր թվով 419* վիճակագրական աշխատանք՝ ըստ ծածկագրերի, որոնք ըստ կատարման պարբերականության (թվով 1 883** միավոր), կատարվել են սահմանված ժամկետներում:

Վիճակագրական աշխատանքները (ցուցանիշները) իրականացվում (հաշվարկվում) են ԱՄՀ հիմնած և վիճակագրական տվյալների հավաքագրման, մշակման որակի, պարբերականության, ինչպես նաև տեղեկատվության տարածման միասնական չափորոշիչներ (ստանդարտներ) սահմանող «Տվյալների տարածման հատուկ ստանդարտին» (SSՀՄ) համապատասխան:

2003թ. նոյեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետությունն անդամակցեց SSՀՄ-ին (տես՝ ԱՄՀ <http://docs.armstat.am/nsdp/> կայքէջը), ըստ այդմ կատարելով նաև կարևոր քայլ՝ ուղղված երկրի վիճակագրական համակարգի համապատասխանեցմանը վիճակագրության ոլորտում միջազգային կարևոր ստանդարտներից մեկին:

2008թ. ապրիլի 29-ին ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի կազմակերպական նստաշրջանում Հայաստանն ընտրվել է ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի (24 անդամ երկիր) նոր անդամ: Անդամակցությունը 4 տարի ժամկետով էր՝ սկսած 2009թ. հունվարի 1-ից:

2009թ. փետրվարի 10-ին ԱՄՀ պաշտոնական ինտերնետային կայքում (<http://www.imf.org/external/np/rosc/rosc.asp>) զետեղվել է Հայաստանի վերաբերյալ ԱՄՀ Ստանդարտների և կողերի պահպանման զեկույցը, որը ներառում է տվյալների որակի գնահատման ձևաչափի օգտագործմամբ մանրամասն գնահատումը:

ՀՀ ԱՎԾ 2014 թվականին կատարած աշխատանքները սույն հաշվետվության մեջ ներկայացված են «2014 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» (հետայսու՝ Ծրագիր) (դրա հավելվածների) կառուցվածքին (հաջորդականությանը) համապատասխան:

* Ներառված են այն աշխատանքները, որոնք համաձայն «2013 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի», ավարտվել են 2014 թվականին (տես՝ սույն հավելվածի 1ա աղյուսակը):

** Ներառված է կատարված աշխատանքների նաև այն պարբերականությունները, որոնք համաձայն «2013 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի», ավարտվել են 2014 թվականին (տես՝ սույն հավելվածի 1ա աղյուսակը):

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1.1. Ազգային հաշիվներ, համախառն ներքին արդյունքի ցուցանիշ

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 22 աշխատանքներ (111001-111009, 112001-112012, 112014 ծածկագրեր) իրականացվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ: Իրականացված աշխատանքների մասով հաշվարկվել են.

1. ամսական կտրվածքով՝

- ✓ տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) օպերատիվ և նախնական տվյալներով,

2. եռամսյակային կտրվածքով՝

- ✓ Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ցուցանիշը մեկ շնչի հաշվով նախնական տվյալներով,
- ✓ ՀՆԱ-ի ցուցանիշը նախնական տվյալներով.
- արտադրական եղանակով՝ տնտեսական գործունեության տեսակներով,
- ծախսային եղանակով՝ ըստ ծախսային բաղադրիչների,

3. տարեկան կտրվածքով հաշվարկվել և մշակվել են.

- ✓ 2013թ.-ի ՏԱՑ-ն ըստ ամիսների, վերանայված տվյալներով՝ պայմանավորված 2012թ. հաշվետու տվյալների հիման վրա 2013թ. վերանայված ՀՆԱ-ում (առանց արտադրանքի գուտ հարկերի և ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունների (ՖՄԱԶԾ)) տնտեսական գործունեության տեսակների կշիռների փոփոխությամբ,
- ✓ ՀՆԱ-ի ցուցանիշը մեկ շնչի հաշվով՝ 2012թ. վերջնական հաշվետու տվյալներով և 2013թ.-ը՝ վերանայված 2012թ. տարեկան հաշվետու տվյալներով,
- ✓ տարեկան և եռամսյակային ՀՆԱ-ի ցուցանիշի հաշվարկն ընթացիկ և նախորդ տարվա գներով.
- արտադրական եղանակով՝ տնտեսական գործունեության տեսակներով,
- ծախսային եղանակով՝ ըստ ծախսային բաղադրիչների,

հաշվետու տվյալներով՝

-2012 թվականի տարեկանը և եռամսյակները՝ ճշգրտված 2012 թվականի հաշվետու տարեկան տվյալների հիման վրա

վերանայված հաշվետու տվյալներով՝

-2013 թվականի տարեկանը և եռամսյակները՝ ճշգրտված 2012թվականի հաշվետու տարեկան տվյալների հիման վրա,

- ✓ ՀՆԱ-ի հաշվարկը բազային տարվա մշտական, միջին տարեկան գներով.

- արտադրական եղանակով՝ տնտեսական գործունեության տեսակներով,
- ծախսային եղանակով՝ ըստ ծախսային բաղադրիչների,
- 2012 թվականի ՀՆԱ-ն վերջնական՝ հաշվետու տվյալներով,
- 2013 թվականի ՀՆԱ-ն նախնական՝ հաշվետու տվյալներով ճշգրտված,

- ✓ ՀՆԱ-ի հաշվարկը բազային տարվա մշտական, միջին տարեկան գներով՝ սեզոնային ճշգրտումներով.

- արտադրական եղանակով՝ տնտեսական գործունեության տեսակներով,
- ծախսային եղանակով՝ ըստ ծախսային բաղադրիչների,
- 2012 թվականի ՀՆԱ-ն վերջնական՝ հաշվետու տվյալներով,
- 2013 թվականի ՀՆԱ-ն նախնական՝ հաշվետու տվյալներով ճշգրտված,
- ✓ 2012 թվականի ՀՆԱ-ի հաշվարկը եկամուտների ձևավորման եղանակով հաշվետու տվյալներով (ըստ տնտեսական գործունեության տեսակների)
- ✓ Ծախսային եղանակով 2013 թվականի տարեկան և եռամսյակային ՀՆԱ-ի «ապրանքների և ծառայությունների արտահանում և ներմուծում» բաղադրիչների վերահաշվարկ՝ 2013 թվականի վճարային հաշվեկշռի վերջնական տվյալներին համապատասխան, ընթացիկ և նախորդ տարվա գներով:
- ✓ 2011 թվականի ՀՆԱ-ի (վերանայված 2011 թվականի հաշվետու տվյալներով) ծախսային բաղադրիչների բաշխումն ըստ ՀՆԱ-ի ծախսերի դասակարգչի:

2012 թվականի հաշվետու տվյալներով իրականացվել են հետևյալ հաշվարկները.

- ✓ արտադրության հաշվի՝ ըստ հանրապետության, տնտեսության հատվածների և տնտեսական գործունեության տեսակների,
- ✓ եկամուտների ձևավորման հաշվի՝ ըստ հանրապետության, տնտեսության հատվածների և տնտեսական գործունեության տեսակների,
- ✓ սկզբնական եկամուտների բաշխման հաշվի՝ ըստ հանրապետության և տնտեսության հատվածների,
- ✓ եկամուտների օգտագործման հաշվի՝ ըստ հանրապետության, տնտեսության հատվածների և ծախսային բաղադրիչների,
- ✓ տնօրինվող եկամուտների օգտագործման հաշվի՝ ըստ հանրապետության և տնտեսության հատվածների,
- ✓ եկամուտների երկրորդային բաշխման հաշվի՝ ըստ հանրապետության և տնտեսության հատվածների,
- ✓ բնախրային ձևով եկամուտների վերաբաշխման հաշվի՝ ըստ հանրապետության և տնտեսության հատվածների,
- ✓ ճշգրտված տնօրինվող եկամուտների օգտագործման հաշվի՝ ըստ հանրապետության և տնտեսության հատվածների,
- ✓ կապիտալի հետ գործառնությունների հաշվի՝ ըստ հանրապետության, տնտեսական գործունեության տեսակների և հատվածների,
- ✓ ֆինանսական և ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածների ավելացված արժեքը (արտադրական եղանակով)՝ ըստ հանրապետության, տնտեսական գործունեության տեսակների, հատվածների և ենթահատվածների,
- ✓ ազգային հարստության բաղադրիչները,
 - վիճակագրական դիտարկման դաշտում ընդգրկված կազմակերպությունների հիմնական միջոցների արժեքը հաշվեկշռային և մնացորդային արժեքներով՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների 2013 թվականին,
 - բնակչության տնային գույքի կուտակման հաշվարկը 2013 թվականին:

1.2. Արտադրություն (ծառայություններ)

1.2.1 Արդյունաբերություն

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 12 աշխատանքները (121001-121012 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Արդյունաբերության գծով վիճակագրական տեղեկություններ են հավաքագրվել և մշակվել թվով 7 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով (որոնցից 1-ը՝ ամսական և 6-ը՝ տարեկան պարբերականությամբ):

Արդիականացվել է արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների վիճակագրական դաշտը և դրանով պայմանավորված՝ շարունակվել են մշտադիտարկմամբ ընդգրկված նոր կազմակերպությունների գործունեության տեսակների վերաձևակազմման աշխատանքները:

Ընտրանքային դիտարկման մեխանիզմների կիրառմանը զուգահեռ, առանձին արտադրությունների գծով (ըստ ցածր առաձգականությամբ արտադրանքների արտադրության բազային ցուցանիշների) շարունակվել է իրականացվել չդիտարկվող (չհաշվառվող) դաշտի գնահատումը՝ օգտագործելով ինչպես տնային տնտեսությունների, այնպես էլ ընտրանքային հետազոտությունների արդյունքները:

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակային և տարեկան) մշակվել և ամփոփվել են արդյունաբերությունը բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ հանրապետության, մարզերի և ք. Երևանի, տնտեսական գործունեության տեսակների, արտադրատեսակների, ինչպես նաև եռամսյակային պարբերականությամբ՝ ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:

Էներգահաշվեկշռի կազմման ուղղությամբ իրականացվող աշխատանքների շրջանակում պատրաստվել և ՀՀ ՎՊԽ 2014թ. հոկտեմբերի 31-ի թիվ 43-Ն որոշմամբ հաստատվել է «Էներգակիրների արտադրության, սպառման և պահուստների մասին» Ձև թիվ 1-Էներգետիկա (տարեկան) և «Էներգակիրների առկայության, ներկրման և պահուստների մասին» Ձև թիվ 2-Էներգետիկա (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևերը և դրանց լրացման ցուցումները (ՀՀ ԳՆԱՏ) 31(510)¹, 03 մարտի 2014թ.): Նշված ձևերը կիրառության մեջ են մտնելու 2015թ. հունվարից:

Հայաստանի Հանրապետության ԱՄՀ ՏՏՀՄ-ին անդամակցության նախապայմանների ապահովման նկատառումներով պայմանավորված, արդյունաբերության վիճակագրության մի շարք ցուցանիշների վերաբերյալ, հաստատված ժամանակացույցով, ներկայացվել է տեղեկատվություն:

1.2.2. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 25 աշխատանքները (122001-122006, 122008-122013, 122015, 122016, 122023-122030, 122032-122034 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության և ձկնաբուծության գծով վիճակագրական տեղեկությունները հավաքագրվել և մշակվել են թվով 23 պետական վիճակագրական հաշվետվությունների և ամփոփ հաշվետվությունների ձևերով, 4 հարցաթերթերով, ինչպես նաև 4 տեղեկանքներով: Ընդ որում, պետական վիճակագրական հաշվետվություններից, ամփոփ հաշվետվություններից, հարցաթերթերից և տեղեկանքներից 9-ն ամսական պարբերականությամբ են և 22-ը՝ տարեկան: Հաշվետվություններից, հարցաթերթերից և տեղեկանքներից 15-ը բուսաբուծության գծով են, 9-ը՝ անասնաբուծության, 2-ը՝ բուսաբուծության և անասնաբուծության, 4-ը՝ գյուղատնտեսությանն առնչվող այլ բնույթի են, իսկ 1-ը՝ ձկնորսության և ձկնաբուծության ոլորտի վերաբերյալ է:

Գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման դաշտից (187 գյուղական համայնք, 7 480 գյուղացիական տնտեսություն) 4 հարցաթերթերի միջոցով հավաքագրվել է տեղեկատվություն բուսաբուծության և անասնաբուծության՝ արտադրված բուսաբուծական և անասնաբուծական մթերքի ծավալի, միջին բերքատվության, տնտեսություններում արտադրված մթերքի ըստ ուղղությունների իրացման և դրանց արտադրության վրա կատարված ընթացիկ ծախսերի վերաբերյալ և այլն:

Նպատակ ունենալով արդիականացնել ընտրանքային դիտարկման դաշտից հավաքագրվող, ոլորտը բնութագրող վիճակագրական ցուցանիշների ցանկը մշակվել են թվով 3 հարցաթերթերի (2 ամսական և 1 տարեկան պարբերականությամբ) նոր տարբերակներ, նորացվել է հարցաթերթի ձևաչափը (ինչը հնարավորություն կընձեռի հնարավորինս հարմար դարձնել վիճակագիրների կողմից հարցաթերթերի լրացման ու ամփոփման գործընթացը): Նոր հարցաթերթերը հաստատվել են ՀՀ ՎՊԽ անհատական որոշումներով:

Իրականացվել է հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում անցկացված գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի համատարած հաշվառման արդյունքների ընտրանքային ճշգրտումներ՝ թիվ 1 ու թիվ 2 տեղեկանքներով: Ստացված տվյալներն օգտագործվում են համատարած հաշվառման արդյունքում հավաքագրված տվյալների ճշգրտման համար:

Գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման դաշտի վիճակագիրների կողմից անց է կացվել հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի որակի հետազոտություն:

Եռամսյակային պարբերականությամբ մշակվել և ամփոփվել են գյուղատնտեսությունը բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:

Յուրաքանչյուր եռամսյակ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական զեկույցում զետեղվել է տեղեկատվություն անտառային տնտեսության վերաբերյալ ըստ ՀՀ գյուղատնտեսության նախարարության

վարչական ռեգիստրի տվյալների (անտառային տնտեսության վերաբերյալ տվյալները ներկայացվում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից 2014թ. հունվարից ուժի մեջ մտած Ձև թիվ 1-ԱՆՏԱՌ (եռամսյակային) վարչական վիճակագրական հաշվետվությամբ):

2014թ. ընթացքում ՀՀ ԳՆ-ն աջակցություն է ցուցաբերվել գյուղատնտեսության վարչական ռեգիստրի ձևավորման և վարման շուրջ տարվող աշխատանքներում:

2014 թվականին ՀՀ գյուղատնտեսական համատարած հաշվառման (ԳՀՀ) և դրա արդյունքների որակի գնահատման հետգյուղատնտեսական հաշվառման կազմակերպման ու իրականացման նպատակով ՀՀ ՎՊԽ կողմից հաստատվել են 56 անհատական և 4 նորմատիվ որոշումներով փաստաթղթեր՝ ձևաթղթեր, հրահանգներ, հուշատետրեր, ամփոփ տեղեկագրեր և այլն:

Գյուղատնտեսության ոլորտը (մասնավորապես բուսաբուծության) բնութագրող ընթացիկ վիճակագրական ցուցանիշները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով նորացվել են թվով 10 վիճակագրական հաշվետվությունների ձևեր և դրանց լրացման հրահանգներ, որոնցում ընդգրկված ցուցանիշները համապատասխանեցված են ԳՀՀ հարցաթերթերում ընդգրկված ցուցանիշներին:

2014 թվականի ընթացքում լրամշակվել են անասնաբուծական և բուսաբուծական արտադրանքի արտադրության (ամսական և տարեկան) Որակի հոչակագրերը (զետեղված են ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջում, «Փաստաթղթավորում» բաժնում):

1.2.3. Շինարարություն

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 9 աշխատանքները (123001-123003, 123005, 123007-123011 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Շինարարության գծով վիճակագրական տեղեկությունները հավաքագրվել, մշակվել և ամփոփվել են թվով 7 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով և 1 աղյուսակով (որոնցից 4-ը՝ ամսական և 4-ը՝ տարեկան պարբերականությամբ):

2014 թվականի ընթացքում հաշվարկվել են հանրապետությունում իրականացված շինարարության հիմնական ցուցանիշներն ամսական պարբերականությամբ և ըստ մարզերի՝ եռամսյակային կտրվածքով, իրականացվել է անհատական բնակելի շենքերի և մասնավոր շինարարական օբյեկտների դիտարկում, պարբերաբար անցկացվող շրջագայությունների միջոցով ընդլայնվել է բնակչության միջոցների հաշվին կառուցված նոր շինարարական օբյեկտների ցանկը (համացանկը):

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակային և տարեկան) մշակվել և ամփոփվել են շինարարությունը բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ հանրապետության, մարզերի, տնտեսական գործունեության տեսակների, ֆինանսավորման աղբյուրների, ինչպես նաև եռամսյակային պարբերականությամբ՝ ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:

Իրականացվել են շինարարության ոլորտի վիճակագրական հաշվառման դաշտի արդիականացման աշխատանքներ:

Իրականացվել են ՀՀ տարածքում կառուցապատում իրականացնելու թույլտվությունների և կառուցապատման ընթացքում գտնվող օբյեկտների վերաբերյալ տեղեկատվության ստացման և ամփոփման աշխատանքներ:

Իրականացվել են ՀՀ քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված անձանց վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և ամփոփման աշխատանքներ:

1.2.4. Տրանսպորտ

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 21 աշխատանքները (124001–124021 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Տրանսպորտի գծով վիճակագրական տեղեկությունները հավաքագրվել և մշակվել են թվով 20 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով և 1 աղյուսակով (որոնցից 7-ը՝ ամսական, 4-ը՝ եռամսյակային, 10-ը՝ տարեկան պարբերականությամբ): Ընդ որում, ավտոմոբիլային տրանսպորտի՝ 3, օդային տրանսպորտի՝ 8, երկաթուղային տրանսպորտի՝ 3, քաղաքային էլեկտրատրանսպորտի՝ 3, ավտոմոբիլային ճանապարհների՝ 1 և հիմնական միջոցների գծով՝ 1 հաշվետվության ձևերով, իսկ 124005 և 124021 ծածկագրերով համապատասխանաբար՝ «Ճանապարհատրանսպորտային պատահարներ» և «Փոստի և սուրհանդակի» վիճակագրական աշխատանքները կատարվել են ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ:

Աշխատանքներ են իրականացվել վարչական ռեգիստրների կատարելագործման և տրանսպորտի ոլորտի վիճակագրական հաշվառման դաշտի արդիականացման ուղղությամբ:

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակային և տարեկան) մշակվել և ամփոփվել են տրանսպորտի ոլորտը բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ հանրապետության, մարզերի, տրանսպորտի տեսակների, ինչպես նաև եռամսյակային պարբերականությամբ՝ ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:

Հավաքագրվող ցուցանիշների օգտագործման արդյունավետության բարձրացման և ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցման անհրաժեշտությամբ պայմանավորված, ինչպես նաև համաձայն ՀՀ ԱՎԾ նախագահի 26.11.2013թ. թիվ 146-Ա հրամանի 1 կետի 1.3 և 1.4 ենթակետերի, փոփոխության են ենթարկվել թվով 7 տրանսպորտի պետական վիճակագրական հաշվետվությունների ձևեր և դրանց լրացման հրահանգներ, որոնք ուժի մեջ են մտել 2015թ. հունվարի 1-ից, իսկ 2 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևեր հանվել են շրջանառությունից:

1.2.5. Կապ

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 8 աշխատանքները (125002–125009 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Կապի համակարգի գծով վիճակագրական տեղեկություններ են հավաքագրվել և մշակվել թվով 8 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով՝ 1 ամսական, 1 եռամսյակային և 6 տարեկան պարբերականությամբ:

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակային և տարեկան) մշակվել և ամփոփվել են կապի ոլորտը բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ հանրապետության, ինչպես նաև եռամսյակային պարբերականությամբ՝ ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:

Հավաքագրվող ցուցանիշների օգտագործման արդյունավետության բարձրացման և ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցման անհրաժեշտությամբ պայմանավորված, ինչպես նաև համաձայն ՀՀ ԱՎԾ նախագահի 26.11.2013թ. թիվ 146-Ա հրամանի 1 կետի 1.3 և 1.4 ենթակետերի, փոփոխության են ենթարկվել թվով 6 կապի պետական վիճակագրական հաշվետվությունների ձևեր և դրանց լրացման հրահանգներ, որոնք ուժի մեջ են մտել 2015թ. հունվարի 1-ից:

1.2.6. Առևտուր և այլ ծառայություններ

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 13 աշխատանքները (126001-126013 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Առևտրի և այլ ծառայությունների գծով վիճակագրական տեղեկություններ են հավաքագրվել և մշակվել թվով 11 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով, 1 տեղեկանքով և 1 դիտարկման ձևով (7 ամսական, 3 եռամսյակային, 3 տարեկան), որոնցից 9-ը՝ առևտրի (5-ը՝ ամսական, 2-ը՝ եռամսյակային և 2-ը՝ տարեկան պարբերականությամբ), 3-ը՝ ծառայությունների (2-ը՝ ամսական և 1-ը՝ եռամսյակային պարբերականությամբ) և 1-ը՝ առևտրի և ծառայությունների գծով (տարեկան պարբերականությամբ):

Առևտրի ոլորտի վիճակագրական տեղեկատվության ամբողջականացման նպատակով սպառողական ապրանքների շուկաներում պարբերաբար անց են կացվել ընտրանքային դիտարկումներ ըստ ապրանքային խմբերի (պարենային, ոչ պարենային), վաճառատեղերի քանակի, մեկ վաճառատեղի մեկ օրվա առևտրի շրջանառության ծավալի:

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակային և տարեկան) մշակվել և ամփոփվել են առևտուրը և ծառայությունները բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ հանրապետության, մարզերի, ինչպես նաև եռամսյակային պարբերականությամբ՝ ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:

Իրականացվել են առևտրի և այլ ծառայությունների ոլորտի վիճակագրական հաշվառման դաշտի ամենամսյա արդիականացման աշխատանքներ:

Իրականացվել են նաև ոլորտի 5 հաշվետվական ձևերի փոփոխություններ՝ պայմանավորված անվանման ու դիմային մասի, ցուցանիշների փոփոխությամբ և լրացման հրահանգներում ցուցանիշների սահմանումների և հասկացությունների հստակեցմամբ ու ցուցանիշների լրամշակմամբ:

Կատարվել են պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալների մուտքագրման, մշակման և ամփոփելը Ելքային աղյուսակների ստացման համար համակարգչային ծրագրերի փոփոխություններ և լրացումներ:

1.2.7. Կազմակերպությունների տնտեսական գործունեությունը

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 4 աշխատանքներ (127003-127005 և 127007 ծածկագրեր՝ 2-ը եռամսյակային և 2-ը տարեկան պարբերականությամբ) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

2014թ.-ին տվյալների հավաքագրումն իրականացվել է ընտրանքային եղանակով վիճակագրական մշտադիտարկման դաշտում ընդգրկված կազմակերպություններից պետական վիճակագրական հաշվետվությունների հավաքագրման միջոցով: Կազմակերպությունների ընտրանքը կատարվել է ՀՀ ԱՎԾ բիզնես-ռեգիստրի գործող կազմակերպությունների արդիականացված բազայից:

Կազմակերպություններն ըստ աշխատողների թվաքանակի բաժանվել են 2 խմբի՝ խոշոր ու միջին կազմակերպություններ և փոքր ու գերփոքր կազմակերպություններ: 1 285 խոշոր և միջին կազմակերպությունները հետազոտվել են համատարած, իսկ փոքր և գերփոքր կազմակերպություններից (ընտրանքի գլխավոր համակցությունից) շերտավորված ընտրանքի մեթոդով՝ ըստ մարզերի, հիմնական գործունեության տեսակի և աշխատողների միջին ցուցակային թվաքանակի ընտրվել է 1 018 կազմակերպություն: Հետազոտված փոքր և գերփոքր կազմակերպությունների տվյալները տարածվել են ընտրանքի գլխավոր համակցության վրա: Նախապես ճշգրտվել են ընտրանքում ընդգրկված կազմակերպությունների գործունեության հիմնական տեսակի ծածկագրերն ըստ Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի 2-րդ խմբագրության (ՏԳՏՀԴ-2):

1.3. Գներ և սակագներ

Ծրագրով նախատեսված թվով 56 աշխատանքներ (131001-131032, 132001-132005, 133001-133006, 134001-134005, 135001, 136001-136004, 137001, 137003, 138001 ծածկագրեր)՝ 42 ամսական, 12 եռամսյակային, 2 տարեկան կատարվել են սահմանված ժամկետներում:

Գործող մեթոդաբանության համաձայն, յուրաքանչյուր ամիս հաշվարկվել են գների հետևյալ ինդեքսները.

- սպառողական գների ինդեքս (ՍԳԻ) (ըստ հանրապետության և 11 հետազոտվող բնակավայրերի՝ 65 ապրանքային խմբերով, ծառայությունների տեսակներով և 470 անվանում ապրանք-ծառայություններով),
- արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսն ըստ ՏԳՏԴ-ի 2 խմբագրման,
- գյուղատնտեսական արտադրանքի իրացման գների ինդեքս (ըստ հանրապետության, իրացման ուղիների, ապրանքային խմբերի և հետազոտվող 61 անվանում մթերքի),
- գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս (ըստ հանրապետության, ապրանքային խմբերի և հետազոտվող 92 անվանում արտադրության միջոցների),

- բեռնափոխադրումների սակագների ինդեքս (ըստ հանրապետության, տրանսպորտի տարատեսակների (երկաթուղային, օդային, ավտոմոբիլային և խողովակաշարային)),
- արտաքին առևտրի գների ինդեքս՝ մշակվել է ամսական պարբերականությամբ, 4 ուղղություններով՝ ըստ բոլոր երկրների, ԱՊՀ երկրների և ոչ ԱՊՀ երկրների: «Ոչ ԱՊՀ երկրներ» խմբից իրականացվում է նաև գների ինդեքսների հաշվարկ՝ ըստ Եվրամիության երկրների:
- 90 անվանում կարևորագույն ապրանքատեսակների գների օպերատիվ 10-օրյա դիտարկում (ըստ հանրապետության և հետագոտվող 11 բնակավայրերի, որի հիման վրա կատարվում է գնաճի հաշվարկ (օպերատիվ գնահատական) հանրապետությունում):
- ՀՀ ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված շինարարության գների ինդեքսների հիման վրա իրականացվել են շինարարության բնագավառում գների ինդեքսների լրահաշվարկներ:
- ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ամփոփ տեղեկատվության հիման վրա եռամսյակային և ամսական կտրվածքով հաշվարկվել է անշարժ գույքի (բազմաբնակարան և անհատական բնակելի տների) շուկայական միջին գների փոփոխությունները ՀՀ-ում:
- ՀՀ մարզերի 187 գյուղական բնակավայրերում ընտրանքային եղանակով ընտրված 7 480 գյուղացիական տնտեսություններում կատարվել է գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների, քանակի ու ծավալների ամենամսյա հետազոտություն: Ստացված տվյալների հիման վրա հաշվարկվել են՝ հանրապետությունում գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսներն իրացման 3 ուղիներով (մթերող կազմակերպություններին, անհատ ձեռնարկատերերին, գյուղատնտեսական մթերքի շուկայում (61 ապրանքատեսակ)) և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսներ (92 անվանում արտադրության միջոցներ):

Ազգային հաշիվներում, որպես դեֆլյատորներ օգտագործման նպատակով կատարվել է տնտեսության առանձին ոլորտների գների ինդեքսների լրացուցիչ հաշվարկ՝ ամսական, եռամսյակային (նախորդ եռամսյակի, նախորդ տարվա համապատասխան եռամսյակի համեմատ), տարեկան կտրվածքներով:

Մասնակցություն է ցուցաբերվել 2011 թվականի տվյալներով ՀՆԱ-ի և ազգային արժույթի գնողունակության համարժեքության հաշվարկման միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակներում ԱՊՀ տարածաշրջանային համադրումների աշխատանքներին, ինչի վերջնական արդյունքները Համաշխարհային բանկի կողմից հրապարակվել են 2014 թվականին:

2014 թվականի տվյալներով ԱՊՀ տարածաշրջանային միջազգային համադրումների ծրագրով իրականացվել է 1 915 անվանում սպառողական ապրանք-ծառայություն ներկայացուցիչների և 500 անվանում ներդրումային ապրանքների (եռամսյակային պարբերականությամբ) գների մասին տեղեկատվության հավաքագրում, մշակում:

Եռամսյակային պարբերականությամբ գնադիտարկումներ են կազմակերպվել և իրականացվել Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում: Պատրաստվել են գնային տեղեկատվության մուտքագրման էլեկտրոնային աղյուսակներ:

Կազմակերպվել և վերահսկվել են ՀՀ բնակավայրերում գների դիտարկման աշխատանքները: Կազմակերպվել է ուսուցողական սեմինար-խորհրդակցություն գնադիտարկողների մասնակցությամբ՝ ՄԳԻ-ի մեթոդաբանական փոփոխությունների և գնադիտարկման կարգի վերաբերյալ: Վերամշակվել է ՀՀ-ում ՄԳԻ-ի հաշվարկման մեթոդաբանությունը և գնադիտարկման կարգը: Մեծածավալ աշխատանքներ են իրականացվել «Անհատական սպառման դասակարգիչ ըստ նպատակների» ՀՀ ազգային 5-րդ մակարդակով մշակման և ներդրման ուղղությամբ (ներդրվել է տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունում (SSԿԱՀ) և ՄԳԻ-ի հաշվարկներում):

ՀՀ ԿԲ-ի համապատասխան մասնագետների հետ համատեղ կազմակերպվել և իրականացվել են քննարկումներ ՀՀ-ում գների վիճակագրության որոշ մեթոդաբանական հարցերի շուրջ (այդ թվում՝ ՄԳԻ-ի):

1.4. Աշխատանքի շուկա

1.4.1. Զբաղվածություն և գործազրկություն

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի վիճակագրական 6 աշխատանքները (141001-141002, 141004-141007 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ: Վիճակագրական տեղեկություններ են հավաքագրվել և մշակվել թվով 3 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով և 3 աղյուսակներով, ընդ որում 3՝ տարեկան, 2՝ եռամսյակային և 1՝ ամսական պարբերականությամբ:

Շարունակվել են աշխատանքի վիճակագրության մշտադիտարկման մեջ ընդգրկված միավորների արդիականացման, տվյալների բազայում վիճակագրական միավորների ռեկվիզիտների (վավերապայմանների) վերանայման, ինչպես նաև «հատվող» փոփոխականների մասով աշխատանքի վիճակագրության և բիզնես ռեգիստրի բազաների նույնականության ապահովման աշխատանքները: Ընդլայնվել է նաև սկզբնական տվյալների բազան էլեկտրոնային եղանակով ներկայացնող կազմակերպությունների քանակը:

Շարունակվել է սկզբնական և ամփոփ տվյալների մշակման համակարգչային ծրագրերի կատարելագործման գործընթացը, որի արդյունքում բարելավվել է մշակվող տվյալների որակը, մեծացել հրապարակվող տվյալների մանրամասնեցման (դեզագրեզացման) աստիճանը, ընդլայնվել է էլքային աղյուսակների ցանկը՝ հարստացնելով ոլորտը բնութագրող ցուցանիշների կազմը:

Շարունակվել են SSԿԱՀ-ի «Զբաղվածություն» բաժնի 2013թ. տվյալների բազայի տրամաբանական ստուգման-ճշգրտման, տարեկան և եռամսյակային տվյալների ամփոփման աշխատանքները, մշակվել են աշխատանքի շուկայի վերլուծության համար անհրաժեշտ նոր փոփոխականներ: Տվյալների վերլուծության արդյունքում հրապարակվել են ավելի քան 140 էլքային աղյուսակներ՝ համալրված նոր ցուցանիշներով:

Վերանայվել և մասնակիորեն կրճատվել է SSԿԱՀ-ի 2014թ. հարցաթերթի մաս կազմող «Զբաղվածություն» բաժինը: Զուգահեռաբար, տրամաբանական ստուգման-

ճշգրտման են ենթարկվել 2014թ. ՏՏԿԱՀ-ի երեք եռամսյակների տվյալների բազաները:

Կարևորելով երկրի սոցիալ-տնտեսական կայունության տեսանկյունից խիստ արդիական դարձած զբաղվածության ոլորտի գերակա խնդիրները, աշխատանքի շուկայի վերաբերյալ առավել համակողմանի և հնարավորինս մանրամասնեցված տվյալների առկայության անհրաժեշտությունը, ինչպես նաև համապատասխան ոլորտի միջազգային փորձագետների խորհրդատվությունը, ՀՀ կառավարության ֆինանսական աջակցությամբ 2014թ. հունվարից իրականացվել է ՏՏԿԱՀ-ից առանձնացված աշխատուժի հետազոտություն (ԱՀ)՝ 7 680 տնային տնտեսությունների ընտրանքով: Տվյալների մշակման նպատակով մշակվել են տեղեկատվության մուտքագրման փուլի համար անհրաժեշտ ստուգիչ, ինչպես նաև ելքային ցուցանիշների հաշվարկման ալգորիթմները:

ՀՀ աշխատաշուկան բնութագրող ԱՀ-ի արդյունքներով հաշվարկված առանցքային ցուցանիշները հրապարակվել են եռամսյակային պարբերականությամբ:

Միջազգային համադրելիության ապահովման նպատակով շարունակվել է ցուցանիշների հաշվարկման կիրառվող մեթոդաբանության և տվյալների ներկայացման ձևաչափի կատարելագործումը՝ առաջնորդվելով Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) հրապարակումների չափանիշով:

ԱՄԿ և ՄաստերՔարդ հիմնադրամի Work4Youth ծրագրի շրջանակում ՀՀ մարզերի և Երևան քաղաքի 3 300 տնային տնտեսություններում իրականացվել է 15-29 տարեկան երիտասարդների զբաղվածության հիմնահարցերին առնչվող «Անցում դպրոցից դեպի աշխատանք» միանվագ հետազոտությունը, որը 2012թ. իրականացված նույնանուն հետազոտության երկրորդ շրջափուլն է:

1.4.2. Աշխատավարձ

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի 142001, 142003, 142004 և 142006 ծածկագրերով վիճակագրական 4 աշխատանքները (վարձու աշխատողների աշխատավարձն ըստ սեռի, մարզերի, գյուղ/քաղաք բաշխվածության, տնտեսական գործունեության տեսակների, հատվածների, աշխատանքի վարձատրության չափի, աշխատավարձի ժամկետանց պարտքի, գործատուի կողմից աշխատուժի վրա կատարված ծախսերի և այլն) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Վիճակագրական տեղեկություններ են հավաքագրվել և մշակվել թվով 3 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով և 1 հարցաթերթի միջոցով, ընդ որում 1՝ ամսական և 3՝ տարեկան պարբերականությամբ:

Շարունակվել են հաշվետվային ձևերի համակարգչային մշակման ծրագրերի, ելքային աղյուսակների ստացման ալգորիթմների կատարելագործման աշխատանքները: Ընդլայնվել է տեղեկատվություն ներկայացնող վիճակագրական միավորների և ելքային աղյուսակների քանակը:

1.5. Բիզնես ռեզիստր

Օրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 2 վիճակագրական աշխատանքները (150001 և 150002 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում:

Վարչական ռեզիստր հանդիսացող ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալությունից և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից, սահմանված կարգով, ստացվել են իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ տվյալներ, որոնք մշակվել և համադրվել են բիզնես ռեզիստրի տվյալների արդիականացման նպատակով (04.09.2014թ. ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 575-Ա և 02.09.2014թ. ՀՀ ԱՎԾ նախագահի թիվ 124-Ա հրամաններով հաստատվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկությունները ՀՀ ԱՎԾ տրամադրելու նոր կարգ):

Բիզնես ռեզիստրի ձևավորման և արդիականացման նպատակով ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային գործակալություններից, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումներից ստացվել, համադրվել և ամփոփվել են վերջիններիս վիճակագրական մշտադիտարկումներում առկա իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ տվյալների շտեմարանները:

Ի կատարումն 26.11.2013թ. ՀՀ ԱՎԾ նախագահի 146-Ա հրամանի հաշվետու ժամանակահատվածի յուրաքանչյուր եռամսյակի ավարտին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի Երևան քաղաքի և մարզային գործակալություններին է տրամադրվել եռամսյակի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալությանում գրանցված, փոփոխությունների ենթարկված և լուծարված իրավաբանական անձանց /անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Իրականացվել է շուրջ 16 400 իրավաբանական անձանց և 13 000 անհատ ձեռնարկատերերի 2013թ.-ի տնտեսական գործունեության վերաբերյալ տեղեկատվության (գտնվելու վայրի, գործունեության հիմնական և ոչ հիմնական տեսակների, աշխատողների թվաքանակի, ինչպես նաև գործելու կամ չգործելու վերաբերյալ տվյալներ) արդիականացումը:

Կատարելագործվել են տեղեկատվության ստուգաճշտման, մուտքագրման և վերլուծության համակարգչային ծրագրերը:

1.6. Մասնավորեցում

Օրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 1 վիճակագրական աշխատանքը (160001 ծածկագիր) կատարվել է սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից ներակայացվող մասնավորեցման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը գետեղվել է «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների եռամսյակային թողարկումներում:

1.7. Վիճակագրական դասակարգիչներ

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 3 վիճակագրական աշխատանքները (170002, 170003, 170007 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում:

Ի մասնավորի, շարունակվել են ՏԳՏՀԴ-ի 2-րդ խմբագրության՝ պետական վիճակագրության բնագավառում ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, որի առնչությամբ մի շարք վիճակագրական դիտարկման փաստաթղթեր և դրանց լրացման հրահանգներ (մեթոդական ցուցումներ) համապատասխանեցվել են նաև դասակարգչով սահմանված սկզբունքներին և մոտեցումներին:

Տեխնիկատնտեսական ու սոցիալական տեղեկատվության ազգային մակարդակով դասակարգման նկատառումով և հիմք ընդունելով Եվրոպական համայնքի փորձագետների աշխատանքային խմբի կողմից մշակված Արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների դասակարգչի 2008թ.վերանայված տարբերակը (CPA 2008), իրականացվել են «Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների Հայաստանի Հանրապետության դասակարգչի» ազգային մակարդակով մշակման միջոցառումների հետ կապված աշխատանքներ:

Տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերը դասակարգելու նպատակով իրականացվել են «Անհատական սպառման դասակարգիչ՝ ըստ նպատակների Հայաստանի Հանրապետության դասակարգչի» ազգային մակարդակի տեղայնացման հետ կապված աշխատանքներ:

Աշխատանքներ են տարվել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների կողմից վարվող վիճակագրական աշխատանքներում դասակարգիչների ներդրման կազմակերպական միջոցառումների ուղղությամբ:

1.8. Պետական ռեզիստր

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 2 վիճակագրական աշխատանքները (180001 և 180002 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում:

Վարչական ռեզիստր հանդիսացող ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալությունից սահմանված կարգով ստացվել են նոր գրանցված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ առցանց տեղեկատվություն «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցներում հրապարակման նպատակով:

2. ՀԱՐԿԱԲՑՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ ԵՎ

3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Օրագրով նախատեսված թվով 24 վիճակագրական աշխատանքներ (200001-200004, 300001-300019 և 112013 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

2014թ. ընթացքում ամսական պարբերականությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունից հավաքագրվել են վիճակագրական տեղեկություններ պետական բյուջեի կատարման վերաբերյալ (ըստ ֆինանսավորման), իսկ եռամսյակային պարբերականությամբ՝ տեղեկատվություն պետական և համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի փաստացի կատարողականի, ինչպես նաև ՀՀ պետական պարտքի (ներքին և արտաքին) վերաբերյալ:

ՀՀ ԿԲ-ից ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ հավաքագրվել են վիճակագրական տեղեկություններ դրամավարկային ու բանկային համակարգի, ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի շուկայի, գրավատների, վճարահաշվարկային կազմակերպությունների, արժույթային դիլերների և փոխանակման կետերի գործունեության վիճակագրական հիմնական ցուցանիշների վերաբերյալ:

ԱՄՀ-ի ՏՏՀՄ-ին Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակում, ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել են ՀՀ կենտրոնական և ընդհանուր կառավարության, արտաքին պետական պարտքի, իսկ ՀՀ ԿԲ-ից՝ կենտրոնական բանկի և բանկային համակարգի ամփոփ հաշվեկշռային ցուցանիշների և միջազգային պահուստների վերաբերյալ ամփոփ տվյալները և տեղադրվել ՀՀ ԱՎԾ կողմից ՏՏՀՄ ձևաչափով վարվող Հայաստանի Ազգային ամփոփ տվյալների էջում:

ՀՀ ԿԲ-ից ամսական պարբերականությամբ ստացվել և հրապարակվել են նաև ֆինանսական շուկայում ձևավորված ամենօրյա և ամսական միջին փոխարժեքների վերաբերյալ տեղեկություններ:

4. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

Օրագրով նախատեսված սույն հատվածի թվով 55 վիճակագրական աշխատանքները (410001-410003, 411001-411016, 412001-412019, 420001, 420007,420008, 420010-420013, 430001,430002, 430004, 430006, 430010, 430011, 440001-440002, 450002, 460002 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ (19 ամսական, 15 եռամսյակային և 21 տարեկան):

Ոլորտի վերաբերյալ սկզբնական վիճակագրական տվյալները հավաքագրվել և մշակվել են թվով 7 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով (3-ը՝ միջազգային ծառայությունների առևտրի գծով, 1-ը՝ օտարերկրյա ներդրումների, 2-ը՝ բնական գազի արտահանման և ներմուծման և 1-ը՝ զբոսաշրջության):

Բացի այդ, արտաքին առևտրի, վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի «Ապրանքներ և ծառայություններ» հոդվածների գծով ցուցանիշների հաշվարկման համար օգտագործվել են վարչական ռեգիստրների՝ մասնավորապես ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացվող բեռնամաքսային հայտարարագրերի և ֆիզիկական

անձանց կողմից կատարված առևտրի տվյալների բազաները, ՀՀ ԿԲ-ից ստացված տեղեկանքները:

Կազմվել են.

-2013թ. IV եռամսյակի և տարեկան ՀՀ վճարային հաշվեկշիռների ընթացիկ հաշիվների «Ապրանքներ և ծառայություններ» հոդվածները, 2014թ. I, II և III եռամսյակների ՀՀ վճարային հաշվեկշիռների ընթացիկ հաշիվների «Ապրանքներ և ծառայություններ» հոդվածները:

Հավաքագրվել են.

-ամսական պարբերականությամբ՝ տվյալներ արտաքին առևտրի, մասնավորապես բեռնամաքսային հայտարարքերի և ֆիզիկական անձանց կողմից կատարվող առևտրի, բնական գազի արտահանման և ներմուծման և էլեկտրաէներգիայի արտահանման ու ներմուծման ծավալների վերաբերյալ,

-եռամսյակային պարբերականությամբ՝ տվյալներ միջազգային ծառայությունների առևտրի (կապ, զբոսաշրջության, տրանսպորտ, մշակույթ և այլն), օտարերկրյա ներդրումների (ուղղակի, պորտֆելային և այլ՝ ներառյալ միջազգային վարկերը), բանկային վիճակագրության վերաբերյալ:

ԱՄՀ ՏՏՄ-ին անդամակցությամբ պայմանավորված, շարունակվել է վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային և արտաքին պարտքի դիրքերի, ապրանքների արտաքին առևտրի մեթատվյալների վերանայումը և դրանց զետեղումը Հայաստանի Ազգային ամփոփ տվյալների էջում:

Մինևույն ժամանակ, սկսած 2009թ. մայիսից ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջում, ամսական կտրվածքով, տեղադրվել են ՀՀ արտաքին առևտրի ցուցանիշների (արտահանում և ներմուծում՝ ըստ ապրանքային անվանացանկի 4-նիշ դասակարգման, ապրանքի ծագման երկրի և առևտուր անող երկրի հատկանիշների) շարժընթացը, սկսած 1995թ.-ից՝ ըստ գործընկեր երկրների, իսկ 2010թ. հուլիսից՝ նաև ՀՀ վճարային հաշվեկշռի, իսկ դեկտեմբերից՝ ՀՀ միջազգային ներդրումային դիրքի և ՀՀ համախառն արտաքին պարտքի ցուցանիշների շարքերը:

Համաձայն ՀՀ ԱՎԾ և Եվրոստատի միջև կնքված արտաքին առևտրի տվյալների փոխանակման Համաձայնագրի, յուրաքանչյուր եռամսյակ՝ ամսական կտրվածքով, արտաքին առևտրի տվյալները 8-նիշ դասակարգմամբ ներկայացվել են Եվրոստատին, համապատասխան ձևաչափով, ամսական տվյալները նույնպես 8-նիշ դասակարգմամբ ներկայացվել են նաև ՄԱԿ-ի վիճակագրական բաժին:

ՀՀ արտաքին առևտրի տվյալներն ամսական կտրվածքով Ինտեգրացված թղթակցության համակարգի (ԻԹՀ) միջոցով տեղադրվել են ԱՄՀ կայքէջում:

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

5.1.Ժողովրդագրություն

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 23 վիճակագրական աշխատանքների (511001-511010, 512001, 512003-512005, 512007, 513001-513008) կատարումն ապահովվել է ամբողջությամբ՝ սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Շարունակվել են աշխատանքները բնական շարժի, միգրացիայի, բնակչության սեռատարիքային կազմի հաշվարկի, ծնելիության և մահացության ցուցանիշները բնութագրող ելքային աղյուսակների ստացման համակարգի լրամշակման ուղղությամբ:

2014թ. հունվարի 1-ի դրությամբ գյուղապետարանների կողմից անցկացված ՀՀ գյուղական բնակչության սեռատարիքային կազմի հաշվառման արդյունքներով՝ ըստ Ձև թիվ 9-Ս պետական վիճակագրական հաշվետվության ձևի, տվյալներ են ստացվել բոլոր 866 գյուղական համայնքներից: Դրանցում ամփոփվել են համայնքներում տնային տնտեսությունների քանակի, մշտական բնակչության թվաքանակի, առկա բնակչության առանձին տարիքների և տարիքային խմբերի, տնային տնտեսությունների զբաղված անդամների՝ գյուղատնտեսական և այլ ոլորտներում զբաղվածների թվաքանակի վերաբերյալ ցուցանիշները:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային գործակալությունների կողմից կազմվել են նաև ամփոփ տեղեկագրեր՝ ըստ առանձին գյուղական բնակավայրերի հիմնական ցուցանիշների, նախկին վարչական շրջանների (տարածաշրջանների):

Ձև թիվ 9-Ս պետական վիճակագրական հաշվետվության ձևի ծրագրային մշակման արդյունքում ստացվել են գյուղական համայնքների առկա և մշտական բնակչության թվաքանակի, սեռատարիքային կազմի, տնային տնտեսությունների քանակի և ՀՀ մարզերի ու տարածաշրջանների զբաղված բնակչության թվաքանակների բաշխումը բնութագրող ելքային աղյուսակներ:

Գյուղական բնակչության սեռատարիքային կազմի հաշվառման արդյունքներով պատրաստվել է ՀՀ գյուղական համայնքների (բնակավայրերի) ցանկն ըստ ՀՀ մարզերի մշտական բնակչության թվաքանակի, իսկ քաղաքային և ք. Երևանի վարչական շրջանների մշտական բնակչության թվաքանակներն ըստ բնակչության ընթացիկ հաշվառման տվյալների:

ՀՀ արդարադատության նախարարության (ՀՀ ԱՆ) Քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) տարածքային բաժիններից ամսական պարբերականությամբ ստացված ծննդյան, մահվան, ամուսնության, ամուսնալուծության ակտերի մշակման արդյունքում ստացվել են ամենամսյա օպերատիվ տվյալներ՝ ՀՀ մարզերի և տարածաշրջանների բաշխմամբ, որոնց հիման վրա ամփոփվել են բնակչության բնական շարժը բնութագրող ցուցանիշների վերաբերյալ տարեկան վիճակագրական ցուցանիշները:

2013թ. 12 ամիսների ընթացքում, ինչպես նաև 2014թ. հունվարի գրանցումներից (փետրվարին ստացված) ծննդյան կամ մահվան փաստացի ժամկետով 2013թ.-ին տեղի ունեցած, ակտերի մշակման արդյունքում ամփոփվել են 2013թ. բնական շարժի վերաբերյալ տարեկան վիճակագրական ցուցանիշները և ծրագրային մշակմամբ ձևավորված բազային ցուցանիշների խմբագրման արդյունքում ստացվել են 22 ելքային աղյուսակներ:

ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբերի 22-ի «ՀՀ ազգային վիճակագրականությանը բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից տվյալներ տրամադրելու կարգը» հաստատելու մասին թիվ 1333-Ն որոշման համաձայն, «Էկոդների» և «մեկնողների» տվյալների վերաբերյալ 2013թ. տեղեկատվությունը եռամսյակային պարբերականությամբ ստացվել է էլեկտրոնային բազայով, որի մշակման արդ-

յունքում ստացված օպերատիվ տվյալների հիման վրա ստացվել են բնակչության միգրացիոն տեղաշարժերի վերաբերյալ վիճակագրական ցուցանիշներ:

ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով վերահաշվարկվել են 2002-2011թթ. ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշները՝ քաղաքային և գյուղական կտրվածքով, ինչի հիման վրա վերագնահատվել են նաև հիմնական ժողովրդագրական ցուցանիշներն ըստ ՀՀ մարզերի, քաղաքային և գյուղական բաշխումով և ք. Երևանի:

Բնակչության բնական շարժի՝ ամսական և մեխանիկական շարժը բնութագրող՝ եռամսյակային օպերատիվ ցուցանիշների հիման վրա, տարեկան և եռամսյակային պարբերականությամբ, հաշվարկվել են 2014թ. մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշները և պատրաստվել «ՀՀ մշտական բնակչության թվաքանակը» վիճակագրական տեղեկագրերն ըստ ՀՀ մարզերի, տարածաշրջանների, քաղաքային, գյուղական բաշխումով, ք.Երևանի՝ վարչական շրջանների կտրվածքով:

Իրականացվել է ՀՀ մարզերի և Երևան քաղաքի մշտական բնակչության սեռատարիքային կազմի հաշվարկը (ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով) 01.01.2014թ.-ի դրությամբ՝ քաղաքային և գյուղական կտրվածքով, որոնք տեղադրվել են նաև ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջի «Ժողովրդագրական տվյալների բազա» հատվածում:

ԱՄՆ ՏՏՆ-ին ՀՀ-ի անդամակցության շրջանակում, եռամսյակային պարբերականությամբ, «Բնակչություն» ենթաբաժնի համար հաշվարկվել է բնակչության թվաքանակի միջին ցուցանիշի վերաբերյալ տեղեկատվությունը և զետեղվել ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջի համապատասխան հատվածում:

ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի, Եվրոպական տնտեսական հանձնաժողովի, Եվրոստատի, ԵԱՀԿ-ի և մի շարք այլ միջազգային կազմակերպությունների հայցերով պատրաստվել և ներկայացվել է տեղեկատվություն՝ բնակչության թվաքանակի, սեռատարիքային կազմի, ծնելիության, մահացության և դրա պատճառների, ամուսնության և ամուսնալուծության, կյանքի սպասվող տևողության մասին:

2014թ. առաջին կիսամյակից սկսած՝ միգրացիոն վիճակագրությունը համալրվել է ՀՀ-ում միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձանց վերաբերյալ տեղեկատվությամբ, ըստ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության Միգրացիոն պետական ծառայությունից ստացված թիվ 1-Ապաստան, պետական վիճակագրական կիսամյակային ամփոփ հաշվետվության ձևի:

«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին 2014թ. հունիսի 21-ին ընդունված ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ արդարադատության նախարարությունն անցում է կատարել ՔԱԿԳ միասնական էլեկտրոնային կառավարման համակարգի, ինչով պայմանավորված, ՀՀ ԱՎԾ կողմից՝ ծննդյան, մահվան (նաև բժշկական վկայականների), ամուսնության, ամուսնալուծության վերաբերյալ ակտերի ստացման թղթային ձևաչափից էլեկտրոնայինին սահուն անցման գործընթացը կանոնակարգելու նպատակով հանդիպումներ են տեղի ունեցել ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ առողջապահության նախարարության ազգային ինստիտուտի համապատասխան մասնագետների հետ և քննարկվել՝ մեթոդաբանական, տեխնիկական և կազմակերպչական հարցեր:

5.2 -5.7. Սոցիալական ոլորտ (առողջապահություն և սոցիալական ապահովություն, իրավական ոլորտ, կրթություն և գիտություն, մշակույթ և սպորտ, բնական պաշարներ և շրջակա միջավայր, բնակարանային ֆոնդ և կոմունալ տնտեսություն)

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 105 վիճակագրական աշխատանքները (520001-520020, 520022-520035, 520037-520038, 520040-520042, 530001-530009, 540001-540012, 550001-550009, 550011, 560001-560024, 570001-570011 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Ծրագրով նախատեսված այս ոլորտի վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը հավաքագրվել է 105 վիճակագրական հաշվետվությունների ձևերով: ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մասին» ամսական տեղեկանքով, «Հայաստանի Հանրապետության տարածքի կլիմայական պայմանների և մակերևութային ջրային օբյեկտների վիճակի գնահատում» եռամսյակային տեղեկանքով և «Մակերևութային ջրերի քանակի և որակի մասին» տարեկան տեղեկագրով, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Ամսվա ընթացքում դիտված հիդրոոդերևութաբանական պայմանների մասին» ամսական տեղեկանքով և ՀՀ առողջապահության նախարարության «Առողջություն և առողջապահություն» տարեկան տեղեկագրով, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ստիկանության «Հանցագործություններ» տարեկան տեղեկագրով և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայի վերլուծություն» ամսական ամփոփագրով:

Սոցիալական ոլորտի վիճակագրական տեղեկատվությունը հավաքագրվել է 70 վիճակագրական հաշվետվությունների ձևերով, 2-ը՝ ամսական, 6-ը՝ եռամսյակային, 7-ը՝ կիսամսյակային և 55-ը՝ տարեկան պարբերականությամբ:

Շրջակա միջավայրի և բնական պաշարների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը հավաքագրվել է 24 վիճակագրական հաշվետվությունների ձևերով, 1-ը՝ եռամսյակային, 2-ը՝ կիսամսյակային, 21-ը՝ տարեկան պարբերականությամբ:

Բնակարանային-կոմունալ տնտեսության վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը հավաքագրվել է 11 վիճակագրական հաշվետվությունների ձևերով, որոնցից 1-ը՝ եռամսյակային, 10-ը՝ տարեկան պարբերականությամբ:

Հավաքագրվող վիճակագրական ցուցանիշները միջազգային չափանիշներին և դասակարգմանը համապատասխանեցնելու, վիճակագրական տեղեկատվություն սպառողների (օգտագործողների) պահանջարկն ամբողջությամբ բավարարելու նպատակով, վերանայվել են առողջապահության և կրթության ոլորտներին առնչվող վիճակագրական հաշվետվությունների ձևերը և համապատասխան փոփոխություններ կատարվել ներառված ցուցանիշների կազմում:

Վարչական ռեգիստրների ներդրման և կատարելագործման ուղղությամբ ՀՀ ԱՎԾ-ն համագործակցել է համապատասխան ոլորտները համակարգող նախարարությունների և գերատեսչությունների հետ, որի արդյունքում.

- շարունակվել են քննարկումները կրթության ոլորտի վարչական վիճակագրության վարման աշխատանքների նպատակով, ստեղծվել է համատեղ աշխատանքային խումբ,

- շարունակվել է գործնական օժանդակությունը ՀՀ բնապահպանության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի և ՀՀ առողջապահության նախարարությունների համակարգերում վարչական վիճակագրական ռեգիստրների ամբողջական ձևավորման գործընթացին: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում վերանայվել է 2 և ներդրվել 3 նոր վարչական վիճակագրական հաշվետվային ձևեր: ՀՀ առողջապահության նախարարության համակարգում վերանայվել է 6 և ներդրվել 1 նոր վարչական վիճակագրական հաշվետվային ձևեր:

Շարունակվել են աշխատանքները սոցիալական վիճակագրությանն առնչվող ոլորտների համար վիճակագրական տվյալների մարզային բազաների կատարելագործման ուղղությամբ:

Շարունակվել են առողջապահության, բնապահպանական ցուցանիշների հաշվառման համակարգի մշակման աշխատանքները: Աշխատանքներ են տարվել սոցիալական և բնապահպանության վիճակագրության ոլորտներում համապատասխան ցուցանիշների վերանայման և ներդրման ուղղությամբ:

Ընթացքի մեջ են նաև ազգային հաշիվների համակարգում բնապահպանական հաշիվների ներդրման աշխատանքները:

5.8. Տնային տնտեսությունների հետազոտություններ

Ծրագրով նախատեսված տնային տնտեսությունների հետազոտությունների գծով՝ թվով 15 վիճակագրական աշխատանքները (580001-580015 ծածկագրեր), ամբողջությամբ կատարվել են:

Համաձայն Ծրագրի, ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ, 2014թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն անց է կացվել տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն (SSԿԱՀ):

Տնային տնտեսությունների ընտրանքի չափը մեկ տարվա համար կազմել է 5 184 տնային տնտեսություն: Ապահովվել են մարզային կտրվածքով նվազագույն ներկայացուցչական տվյալներ: Յուրաքանչյուր ամիս հետազոտվել է 432 տնային տնտեսություն: Տնային տնտեսությունների ընտրանքում ընդգրկումն իրականացվել է ամենամսյա ռոտացիայի (փոխարինման) եղանակով: Հավաքագրված տվյալների ամփոփումը եկամուտների, ծախսերի, հիմնական սննդամթերքի սպառման, աղքատության մակարդակի, բնակչության սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների, ինչպես նաև այլ ցուցանիշներով, կատարվել է տարեկան կտրվածքով:

SSԿԱՀ-ի նախնական տարեկան արդյունքները զետեղվել են «Պարենային ապահովություն և աղքատություն, 2014թ. հունվար-հունիս» վիճակագրական տեղեկագրում:

Հետազոտության արդյունքների հիման վրա կատարելագործվել են 2015թ.-ին նախատեսվող տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված ընտրանքային հետազոտության գործիքները՝ հարցաթերթն ու օրագիրը:

Իրականացվել են 2013 թվականի ՏՏԿԱՀ-ի տվյալների բազայի տրամաբանական ստուգման և կազմավորման աշխատանքները: Ձևավորված բազայի անվանազերծված տարբերակը հետագա վերլուծության համար տրամադրվել է ՀԲ-ին:

2004-2013թթ. ՏՏԿԱՀ-ի միկրոֆայլերը տնային տնտեսությունների և տնային տնտեսությունների անդամների մակարդակով տեղադրվել են ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջում:

Եռամսյակային պարբերականությամբ հաշվարկվել է նվազագույն սպառողական զամբյուղը՝ միջին ընթացիկ գներով (երկու տարբերակով):

5.9. Պարենային ապահովություն

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 2 վիճակագրական աշխատանքների «Պարենային ապահովության և աղքատության վերաբերյալ տեղեկատվության մշակում և ամփոփում» (ծածկագիր՝ 590001) և «Ազգային պարենային հաշվեկշռի կազմում» (ծածկագիր՝ 590002), կատարումն ապահովվել է սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Հավաքագրվել, մշակվել և ամփոփվել են պարենային ապահովության վիճակագրությանն առնչվող մակրոտնտեսական, սոցիալական և ժողովրդագրական ոլորտների, աշխատանքի վիճակագրության, երեխաների խնամքի և պաշտպանության միջոցառումների, գների և գների ինդեքսների, գյուղատնտեսության, գյուղատնտեսական հողերի բարելավման, գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների, բույսերի կարանտինի և պաշտպանության միջոցառումների, ագրոօդերևութաբանական տեղեկատվության, պարենամթերքի արտաքին առևտրի, անտառպահպանության, անտառպաշտպանության և անտառվերականգման միջոցառումների և տնային տնտեսությունների հետազոտության արդյունքների աղքատության վերաբերյալ ցուցանիշները, որոնք եռամսյակային պարբերականությամբ հրապարակվել են «Պարենային ապահովություն և աղքատություն» վիճակագրական տեղեկագրում:

Հիմք ընդունելով միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված չափանիշները՝ կազմվել են 2013թ. առանձին ապրանքախմբերի ազգային պարենային հաշվեկշիռները: Ընդ որում, առաջին անգամ առանձին պարենային հաշվեկշիռներ են կազմվել «Կաղամբ», «Ծաղկակաղամբ», «Վարունգ», «Գազար», «Գլուխ սոխ», «Սխտոր», «Կանաչ ոլոռ», «Բոստանային մշակաբույսեր», «Խնձոր», «Տանձ», «Սերկևիլ», «Ծիրան», «Դեղձ», «Կեռաս», «Սալոր», «Բալ», «Ընկույզ», «Տխիլ», «Թուզ» և «Հատապտուղ» ապրանքատեսակների համար:

2014թ.-ին աշխատանքային քննարկումներ են կազմակերպվել ՀՀ ԱՎԾ ստորաբաժանումների, շահագրգիռ գերատեսչությունների ու կազմակերպությունների աշխատակիցների հետ, որոնց արդյունքների հիման վրա վերանայվել են պարենային ապահովության ոլորտի տվյալների բազայի որոշ խումբ ցուցանիշներ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ (ԳՀՀ)

ԳՀՀ նախապատրաստման և անցկացման աշխատանքները տարվել են՝ ղեկավարվելով «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» ՀՀ օրենքի դրույթներով, ՀՀ կառավարության որոշումներով, Ծրագրով, «Հայաստանի Հանրապետությունում 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման աշխատանքների ժամանակացույցով», ՀՀ ՎՊԽ որոշումներով և ՀՀ ԱՎԾ նախագահի հրամաններով:

1. ՀՀ ԱՎԾ ներկայացմամբ և Հայաստանի Հանրապետությունում 2014 թվականին անցկացվելիք գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի հավանությամբ ՀՀ կառավարության կողմից ընդունվել է որոշում՝ Հայաստանի Հանրապետության 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման ծրագիրը (հարցաշարը) հաստատելու մասին (2014թ. հունիսի 26-ի, թիվ 644-Ն որոշում):

2. Նախապատրաստվել և հրավիրվել են ՀՀ 2014 թվականի ԳՀՀ կազմակերպման և անցկացման համապետական հանձնաժողովի նիստեր:

Մասնավորապես.

2.1. Հունիսի 13-ի նիստի ընթացքում.

ա) ՀՀ ԱՎԾ կողմից ներկայացվել է ՀՀ 2013 թվականի փորձնական ԳՀՀ-ի հաշվետվությունը,

բ) քննարկվել և համապետական հանձնաժողովի կողմից հավանության է արժանացել ՀՀ ԱՎԾ կողմից ներկայացված ՀՀ 2014 թվականի ԳՀՀ-ի ծրագրի (հարցաշարի) նախագիծը:

գ) քննարկվել է գյուղական համայնքների գյուղատնտեսական նշանակության հողերի կառուցվածքի վերաբերյալ նախնական տեղեկատվության հավաքագրման նպատակով ՀՀ ՎՊԽ 2014թ. մարտի 10-ի թիվ 14-Ս որոշմամբ հաստատված «ՀՀ 2014 թվականի ԳՀՀ-ի ընթացքում գյուղական համայնքներում գյուղատնտեսական համատարած հաշվառման 2-ԳՀՀ» հարցաթերթի լրացման համար ՀՀ գյուղական համայնքների ղեկավարներին հանձնարարականներ տալու մասին հարցը:

3. Փորձնական ԳՀՀ-ի արդյունքների հիման վրա կատարված լրամշակումներից հետո, ՀՀ ՎՊԽ որոշումներով հաստատվել են ԳՀՀ-ն նախապատրաստման, կազմակերպման և անցկացման գործընթացները կանոնակարգող թվով 60 փաստաթղթեր՝ ձևաթղթեր, ցուցումներ, հրահանգներ, հարցաթերթեր, հուշատետրեր, մեթոդաբանական դրույթներ, որոնցից 4-ը նորմատիվ բնույթի են և գրանցվել են ՀՀ արդարադատության նախարարության կողմից:

4. Հուլիսի 31-ի դրությամբ ավարտվել են ՀՀ գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմերի կողմից «Համայնքներում բնակավայրերի, համայնքի տարածքում գտնվող այլ բնակատեղերի և դրանցում առկա տնտեսությունների ցուցակների կազմման աշխատանքները և տրամադրվել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային (տարածքային) գործակալություններին (բաժիններին):

5. Օգոստոս ամսվա ընթացքում իրականացվել են ՀՀ քաղաքային համայնքների (թվով՝ 48 և Երևանի 12 վարչական շրջանների) և 3 000 ու ավելի բնակչություն ունեցող գյուղական համայնքների (թվով 223 գյուղական համայնք) տնտեսությունների

ցուցակների կազմման աշխատանքները՝ 522 հրահանգավորված ցուցակագրողների կողմից:

6. ՀՀ քաղաքներում և գյուղերում տնտեսությունների ցուցակների կազմման աշխատանքների ավարտից հետո, ՀՀ քաղաքային և գյուղական համայնքներում սահմանների ճշգրտման, փոփոխների անվանումների, թաղամասերի և տների համարակալման կարգավորման, համարանիշերի ու անվանացույցերի տեղադրման գործընթացում առկա թերությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ 2014 թվականի ԳՀՀ-ի նախապատրաստման և անցկացման մարզային հանձնաժողովների նիստերի ժամանակ:

7. Հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում ՀՀ 10 մարզերում և Երևան քաղաքում անց են կացվել ՀՀ 2014թ. ԳՀՀ-ի նախապատրաստման և անցկացման մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովների նիստեր՝ համայնքների և Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների ներկայությամբ, որոնց մասնակցել են ՀՀ ԱՎԾ նախագահը, ՀՀ ՎՊԽ անդամները և ՀՀ ԱՎԾ աշխատանքային խումբը: Նիստերի ընթացքում ներկայացվել են ԳՀՀ-ի կարևորությունը, քննարկվել մարզային հանձնաժողովների և համայնքապետերի կողմից ցուցաբերվելիք օժանդակության և ԳՀՀ-ի նախապատրաստման աշխատանքների ընթացքի մասին հարցերը:

8. Տնտեսությունների ցուցակների հիման վրա կազմվել են ՀՀ 2014թ. ԳՀՀ-ն մարզային (տարածքային) կազմակերպական պլանները, որով հաստատվել են ԳՀՀ-ն անցկացման համար հաշվային, հրահանգչական և հաշվառման տեղամասերի կազմն ու կառուցվածքը, դրանց աշխատակազմի տեղակայման համար անհրաժեշտ տարածքների քանակը:

9. Համաձայն ՀՀ 2014 թվականի ամփոփ կազմակերպական պլանի, ՀՀ ողջ տարածքում հաստատվել են 91 հաշվառման, 894 հրահանգչական և 4 462 հիմնական հաշվային տեղամասեր:

10. Նախատեսված ժամանակացույցով իրականացվել են ԳՀՀ-ն փաստաթղթերի և ԳՀՀ-ը լուսաբանող զանգվածային նյութերի տպագրումն ու առաքումը մարզեր:

Մասնավորապես՝

- Երևան քաղաքում և հանրապետության խոշոր մայրուղիներում սեպտեմբերի 10-ից տեղադրվել է 11 գովազդային վահանակ՝ յուրաքանչյուրը 18 քառ.մ մակերեսով:
- տպագրվել և բաշխվել է ՀՀ 2014թ. ԳՀՀ-ը լուսաբանող 25 000 պաստառ, 90 000 բուկլետ, 38 097 օրացույց, ինչպես նաև գյուղատնտեսական համատարած հաշվառման տարբերանշանով 3 000 գովազդային բաժակ, 2 800 գովազդային մագնիս, 2 250 գովազդային էջանիշ և 5 300 գլխարկ:
- նկարահանվել է գովազդային տեսահոլովակ մուլտֆիլմի ձևաչափով, որը սեպտեմբերի 15-ից 30 օրվա ընթացքում օրական 3-4 անգամ, հեռարձակվել է Հ1, Հ2, ԱրմենիաTV, ATV և մարզային հեռուստաալիքներով:
- ԳՀՀ անցկացման անհրաժեշտության մասին բնակչությանն իրազեկող և լուսաբանող գովազդները սեպտեմբերի 10-ից 30 օրվա ընթացքում պարբերաբար հնչել են ռադիոյով և տեղադրվել «Lurer.com» լրատվական համացանցային հրատարակության գլխավոր էջում:

- ԳՀՀ անցկացման անհրաժեշտության մասին բնակչությանն իրազեկող և լուսաբանող հեռուստահաղորդումը հեռարձակվել է ՀՀ հեռուստաալիքով:

11. Օգոստոս-սեպտեմբեր ժամանակաընթացքում իրականացվել է ԳՀՀ ժամանակավոր աշխատողների հավաքագրումն ու նրանց հետ աշխատանքային պայմանագրերի կնքումը.

- ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային և Երևան քաղաքի գործակալություններում ԳՀՀ աշխատանքները համակարգողներ՝ 63 մարդ,
- հաշվառման տեղամասի վարիչներ և նրանց օգնականներ՝ 182 մարդ,
- հրահանգիչ-հսկիչներ՝ 985 մարդ,
- հաշվարարներ՝ 4 688 մարդ:

12. Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում կատարվել են ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային գործակալությունների և դրանց տարածքային բաժինների պատասխանատու անձանց և ԳՀՀ-ն աշխատանքները մարզերում համակարգողների, հաշվառման տեղամասերի վարիչների և նրանց օգնականների հրահանգավորումներ՝ ՀՀ 2014 թվականի ԳՀՀ հարցաթերթը լրացնելու կարգի մասին հրահանգի և ժամանակավոր ներգրավվող աշխատողների պարտականություններին առընչվող մնացած բոլոր փաստաթղթերի ծանոթացում:

13. Հոկտեմբերի 8-10-ն ընկած ժամանակահատվածում հաշվարարների կողմից տների նախնական շրջայցի, հոկտեմբերի 11-31-ը ՀՀ ԳՀՀ տվյալների հավաքագրման (անցկացման) և նոյեմբերի 1-4-ը ընտրանքային վերահսկիչ շրջայցի ընթացքում, օգնության կարգով, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ԳՀՀ վարչության աշխատակիցները գործուղվել են ՀՀ մարզեր և տարածքներ:

14. Գյուղատնտեսությամբ զբաղվող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից լրացվել և ՀՀ ԱՎԾ-ին է տրամադրվել ԳՀՀ 3-ԳՀՀ հարցաթերթը:

15. ՀՀ 866 գյուղական և 49 քաղաքային համայնքների ղեկավարների կողմից լրացվել և ՀՀ ԱՎԾ-ին է տրամադրվել գյուղական և քաղաքային համայնքներում ԳՀՀ 3-ԳՀՀ հարցաթերթը:

16. Կարևորելով ԳՀՀ արդյունքներով ստացված տվյալների որակի ամբողջականությունը, հաշվառման միավորների ծածկույթը և հաշվառման գործընթացում առաջացած անճշտությունների տեսակներն ու չափերը գնահատելու նպատակով, ԳՀՀ տվյալների հավաքագրումն ավարտելուց հետո, 2014թ. նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 14-ը ներառյալ անցկացվեց հետգյուղատնտեսական հաշվառում (ՀԳՀ), որն անկախ վիճակագրական հետազոտություն/հարցում է: Պատահական ընտրանքի միջոցով այն իրականացվեց ՀՀ 10 մարզերի 134 գյուղական և քաղաքային համայնքներում՝ 134 հաշվարարների և 25 հրահանգիչ-հսկիչների միջոցով:

7. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2014թ. ընթացքում Ծրագրով նախատեսված 3 վիճակագրական հետազոտություններն իրականացվել են ՀՀ պետական բյուջեի հաշվին.

- «**Հացահատիկի բերքահավաքի որակի հետազոտություն**» (համապատասխան տեղեկանքների մշակման միջոցով հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի ժամանակ կորուստների հաշվառման նպատակով),

- «**Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն**» (ՀՀ-ում աղքատության մակարդակի և սոցիալական իրավիճակի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով),

- «**Աշխատուժի հետազոտություն**» (ՀՀ աշխատանքի շուկան բնութագրող տեղեկատվության ապահովումը՝ աշխատանքային ռեսուրսների, տնտեսապես ակտիվ (աշխատուժի), տնտեսապես ոչ ակտիվ բնակչության թվաքանակը, զբաղվածությունը (այդ թվում նաև ոչ ֆորմալ), գործազրկությունն ըստ ժողովրդագրական, կրթական, սոցիալ-տնտեսական և այլ բնութագրերի՝ ԱՄԿ մեթոդաբանությանը համապատասխան):

8. ՏԵՂԵԿԱՏՎԱԸՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

8.1-8.5. Վիճակագրական ժողովածուներ (տարեգրքեր), տեղեկագրեր, մամուլի հաղորդագրություններ, տեղեկատվական ամսական զեկույցներ

Ծրագրով նախատեսված տեղեկատվահրատարակչական գործունեության մասով, 2014 թվականին, ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակվել են 52 անուն վիճակագրական հրապարակումներ՝ ներառյալ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցը (հայերեն և ռուսերեն):

ՀՀ ԱՎԾ կողմից 2014 թվականի ընթացքում հրապարակվել է 21 վիճակագրական ժողովածու:

Հրապարակվել են Ծրագրով նախատեսված «Ազգային ամփոփ տվյալների էջը» և 17 անուն վիճակագրական տեղեկագրեր (ամսական, եռամսյակային, տարեկան պարբերականությամբ), ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցը (հայերեն և ռուսերեն):

«ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցները կառուցվել են ճյուղային (գերատեսչական) և տեղական (համայնքային) վիճակագրություն իրականացնող մարմինների, վիճակագրական այլ տեղեկություններ տրամադրողների կողմից ներկայացված պետական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթերի, տեղեկանքների և այլն), հաշվարկների և ՀՀ ԱՎԾ կողմից դրանց ամփոփման, մշակվող ցուցանիշների, իրականացվող հետազոտությունների, տեղեկատվահրատարակչական գործունեության արդյունքում ամփոփված նյութերի (ժողովածուներ, տեղեկագրեր, մամուլի հաղորդագրություններ, զեկույցներ) հիման վրա:

Տեղեկատվական ամսական զեկույցներն ամսական պարբերականությամբ ներկայացվել են հակիրճ, եռամսյակային պարբերականությամբ՝ առավել մանրամասն, ընդլայնված ու ընդհանրական: Եռամսյակային պարբերականությամբ զեկույցներում ընդգրկվել են «ԱՊՀ երկրների հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների միջազգային համադրումներ»՝ ըստ ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի տվյալների, «Հետաքրքրաշարժ վիճակագրություն», «Մեթոդաբանական պարզաբանումներ» և «ՀՀ ԱՎԾ փաստացի հրապարակումների ցանկ» հավելվածները:

Զեկույցներում արտացոլված, ինչպես նաև վիճակագրական այլ տեղեկություններ գետեղվել են ՀՀ ԱՎԾ <http://www.armstat.am> (հայելային կայքէջ՝ <http://www.armstat.info>), <http://www.armstatbank.am> և <http://www.armdevinfo.am> , ինչպես նաև ԱՄՆ <http://dsbb.imf.org> կայքէջերում:

ԱՄՆ ՏՏՀՄ տեղեկագրում առկա է Հայաստանի վիճակագրության համապարփակ մեթոդաբանությունն անգլերենով, իսկ նույն ստանդարտի ՀՀ ԱՎԾ կողմից վարվող Ազգային ամփոփ տվյալների էջում <http://docs.armstat.am/nsdp> /՝ երկրի համապատասխան տվյալները:

Ըստ Ծրագրի, պատրաստվել են. ամսական պարբերականությամբ՝ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները» և «ՀՀ սպառողական գների ինդեքսը», եռամսյակային պարբերականությամբ՝ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների համառոտագիր» մամուլի հաղորդագրությունները, ինչպես նաև 8 անուն թեմատիկ հաղորդագրություն (ընդամենը թվով 11 անուն մամուլի հաղորդագրություն):

Համաձայն Ծրագրի, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային գործակալությունները (ներառյալ Երևան քաղաքի գործակալությունը) պատրաստել են 2 անուն վիճակագրական զեկույցագրեր:

Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության միջև տեղեկատվության փոխանակման վերաբերյալ» համաձայնագրի, ՀՀ ԿԲ-ին 6՝ ամսական, 7՝ եռամսյակային, 2՝ կիսամյակային, 5՝ տարեկան և 2՝ միանվագ (ըստ անհրաժեշտության) պարբերականությամբ տրամադրվում է ամփոփ վիճակագրական տեղեկատվություն:

8.6. Վիճակագրական տեղեկատվության տարածումը ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջի միջոցով և ՀՀ ԱՎԾ բաց գրադարանի գործունեությունը

Շարունակվել են աշխատանքները ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջի կատարելագործման և վիճակագրական նյութեր տեղադրելու ուղղությամբ: 2014թ.-ի ընթացքում ՀՀ ԱՎԾ ինտերնետային հանգույց են այցելել մոտ 227 հազ. անգամ (միայն www.armstat.am կայքէջը), ինչը 9 հազ.-ով (4%) ավելի է 2013թ. համապատասխան ցուցանիշից: Ըստ Google Analytics հաշվիչի գրանցումների, դիտվել է 1 181 797 էջ:

Վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջարկը բավարարելու, վիճակագրական տեղեկատվությունից օգտվելն առավել մատչելի դարձնելու, ինչպես նաև ներկայացվող տեղեկատվության շրջանակն ընդլայնելու նպատակով,

մշակվել են ծրագրեր ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջի արդիականացման ուղղությամբ:

www.armdevinfo.am կայքէջը համալրվել է Հազարամյակի զարգացման նպատակների (ՀՁՆ) ցուցանիշների 2013թ. տվյալներով:

www.armstatbank.am կայքէջում առկա են տնտեսության տարբեր ոլորտները բնութագրող թվով 137 վիճակագրական աղյուսակ (բազա), որոնցից 35-ը կամ 26%-ը տեղադրվել է 2014թ.-ին:

Շարունակվել է ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջի Գլխավոր էջի «Փաստաթղթավորում» բաժնի լրամշակումը:

Կատարվել է ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջի Գլխավոր էջի «Վիճակագրական հաշվետվությունների ձևեր» և «Տվյալների տարածման օրացույցեր» բաժինների լրամշակում:

ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջի Գլխավոր էջը համալրվել է «Վիճակագրական բառարան» և «Վիճակագրական ժողովածուներ» բաժիններով:

ՀՀ ԱՎԾ բաց գրադարանում 2014թ. տարեվերջին առկա է եղել 11 655 անուն վիճակագրական գրականություն, որից 409-ը ստացվել է 2014թ. ընթացքում: Վիճակագրական գրականությունը համալրվել է աշխարհի տարբեր երկրների վիճակագրական ծառայություններից և միջազգային կազմակերպություններից (60%), ինչպես նաև ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակված վիճակագրական հրապարակումների հաշվին (40%):

2014թ. դեկտեմբերին 504 անուն վիճակագրական հրապարակում (այժմեականությունը կորցրած կամ նույն հրապարակման կրկնակի օրինակներ) հանձնվել է ՀՀ ԱՎԾ արխիվին:

2014թ. ընթացքում ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակված վիճակագրական հրապարակումների (ժողովածուներ, տարեգրքեր, տեղեկագրեր (ամսական, եռամսյակային, տարեկան պարբերականությամբ) և զեկույցներ) 2-ական օրինակներ տեղադրվել են գրադարանում:

ՀՀ ԱՎԾ գրադարանի գրանցամատյանում 2014թ. ընթացքում գրանցվել է 65 այցելություն, այդ թվում գիտական` 14% և միջազգային կազմակերպություններից` 10%, պետական մարմիններից` 26%, ինչպես նաև կրթական ոլորտից` 50%: